Զեօթքն խորհուրդքն արգիլել։
Զոմանս ի բանտ կու ձրգէր,
Զայլս բռնաւորաց ձեռս մատնէր.
Զոմանս ծեծէր և հարկանէր,
Դատաւորքքն տուգանէր.
Լեհցոց առջեւ զՀայք նախատէր.
Պեղծ հերձուածող զնոսա կոչէր,
Անհաւատ ւ՝ուրացող ասէր,
Եւ եւտիքեան զՀայս անուանէր։
Եւ յիւր ազգերն ինչ աղջիկ կայր՝
Լեհաց կարիճներուն կու տար.
Օր քան ըզօր կու զօրանայր,
Յետոյ ի դուռն արքային գնար։
Կամէր զնվիրակն ալ տանել
Յերկաթի շղթայս զնա ածել։
Ապա Հայերն շատ դրամ տրվին,
Հազիւ ձեռացն զնա թափեցին։
Խորհուրդ մ՝ալ չար եդ ի մըտին,
Թէ ի՞նչ բան ունի նա յիմ թեմին.
Ղրկեց ի վրայն զիւր Հայտուքնին,
Թէ, թող կորչի իմ թշնամին։
Դարձեալ Հայերն դրամ ժողվեցին,
Մեծ պարոնաց պարգեւք տրվին.
Մինչ երեք օր հազիւ կարցին
Ըզնա պահել իւրեանց միջին.
Զի էր յաւուրքս ձմերայնի
Սաստկասառոյց և ցրտայնի.
Յունվարի մէկն՝ օրըն կաղանդի՝
Հանին ըզնա խեղճ և լալի։
Գնաց Կամենից տրտմագին.
Զոր և անտից ալ վարեցին.
Մեք մնացաք Լով լալագին.
Զմեր քահանայսըն փախուցին։
Թագաւորն էմրէր հանեց,
Զիշխանութիւնն Հայոց խըլեց.
Զվանորայսն յափշտակեց,
Զվախիֆ տըներն առաւ յիրմէնց։
Երեք տարի յայս վիշտ կացաք.
Ի յօրինացըս հեռացաք,
Անհաղորդ ւ՝անխոստովանանք.
Մեռեալք մեր մնացին անթաղք։
Այս ամեն չարքս որ մեզ դիպան,
Սեւագլխացըն մեր եղան.
Մեք եմք չարեացս այս պարտական,
Ի այս ամէն չարքըս մեզնէ ելան։
Վայ և եղուկ հազար բերան
Ազգիս Հայոց որ ի Լով կան.
Ամեն քաղքնին են հանգըստեան,
Միայն աթոռս է դեգերման։
Մինչ մեք էաք ի յայս վըշտի
Ի տառապանս ազգի ազգի,
Խուլ պատրիարգն Ըստամպօլցի,
Մեք մեղքն երեր քաղաքն Լովի.
Որ միաբան հետ Նիկոլի՝
Մտան երկուքն յեկեղեցի.
Հնազանդեցաւ Քաղկեդոնի,
Ի արար ընդ մեզ բաղում տաւի։
Ի ծերութեան ժամանակի
Ընկեց զօրէնս Լուսաւորչի.
Գովէր զգործն Նիկոլի՝
Դառնալ ի կրօնքս Ֆռանգի։
Նա զՀայերն հերձուածող կոչէր,
Ի ամէն ազգաց բաժնած ասէր.
Պարոնտիրին հետըն չրջէր,
Յոր տեղ նստէր՝ զՀայս հայհոյէր։
Լեհ կարգաւորքն երբ զնա տեսան՝
Մեծ որովայնին հաճեցան.
Ասին. « Ի Հայք չկայ քեզ նման.
Ե՛կ դու ընդ մեզ լեր միաբան »։
Պատասխանեաց նա ամենին,
Թէ պարոնտէրն է իմ որդին.
Ես եմ գլուխ և մեծ՝ Հային,
Սա իմ օրհնածս է և չրախ (1) իմ։
Իսկ Իլախնուն երիցանին՝
Որպէս ըզսուրբ զնա պաշտէին.
Ցեկեղեցիս չուրջ ածէին,

1. Աշակերտ։